ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 108-Ա « 12 » հունվարի 2026թ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի Հ.2201-Ա ԵՎ Հ.2203-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Օքսանա Շարոյանցի լ/ա Մերի Հմայակյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունիսի 2-ի հ.հ.2201-Ա և 2203-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ հ.հ.ԱՏ-28112025-01-1044 և ԱՏ-28112025-01-1148 տեղեկանքները, Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունիսի 2-ի հ.հ.2201-Ա և 2203-Ա որոշումները, համաձայն որոնց ճշտվել է Արարատյան փողոցի հ.60/12 հասցեում գտնվող շինության զբաղեցրած 1790.0քմ մակերեսով և Ն.Շենգավիթ 11-րդ փողոցի հ.60/11 հասցեում գտնվող 1850.0քմ մակերեսով հողամասերի սահմանները, «Նեֆրիտ Մայնինգ» ՍՊԸ-ի 30.10.2025թ. եզրակացությունները, տեղագրական հանույթները, «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հ.հ.40/84592-25 և 40/154366-25 գրությունները.

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2025 թվականի դեկտեմբերի 17-ի հ.հ.Ն/75573-25 և Ն/75572-25 եզրակացությունները.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունիսի 2-ի «Շենգավիթ վարչական շրջանի, Արարատյան փողոցի հ.60/12 հասցեում գտնվող շինության զբաղեցրած հողամասի սահմանները ճշտելու, հատակագիծ թողարկելու մասին» հ.2201-Ա որոշման մեջ «1790.0քմ» բառերը փոխարինել «1777.10քմ» բառերով:

2. Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունիսի 2-ի «Ն.Շենգավիթ 11-րդ փողոցի հ.60/11 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին» հ.2203-Ա որոշման մեջ «1850.0քմ» բառերը փոխարինել «1777.30քմ» բառերով:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահավում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ